

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար  
Տարեկան 12 Ձր.  
Վեցամսեայ 6 »

Արտասահմանի համար  
Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար  
Տարեկան 3 զր.  
Վեցամսեայ 1.50 »

ՎԱՆԻՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Պոլիարիոյ համար սոյոք առաջին երեսին համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. հ. երեսին աւելի անկախակերտ համար 20 Օլօ զեղջ կրչայ :

Պոլիարիոյ համար ձեռքի  
(Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

# ՇԱՆՏՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ եւ դրամ ռ  
Խմբագրութեա՛ր

Redaction du Journal  
«Շանտում»  
Varna (Bulgarie)

«ВСТНИКЪ  
«ЖУМЪ»  
Варна.

«VOSTNIK  
«JUM»  
Varna.

Արտասահմանի համար ձեռքի  
(Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

## ԴՐՈՇԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՅԱՒԵԼԻԱԾԸ

Անշուշտ մեր յեղափոխական կեանքի այդ կարեւոր տոկիւմանը այսօր շատ հայեր կարդացին :

Սրբաբար սեւ, աղտոտ վառուցիկ հաւաքածոյ է այդ յաւերածը :

Մի յեղափոխական կուսակցութեան նշանաւոր, աչքի ընկնող գործիչներէ մի ամբողջ շարք երեւան են գալիս սեւ, մրտա, ցոփ և ստրկական նկարագրով : Մարդկարդալով այդ յաւերածի էջերը՝ սարսուռ մէջ այն քառասունի և զազափարի դէմ՝ գործուած ոճրագործութիւններէ հանդէպ, որ գործել են հոգով և մարմնով ստրուկ, բայց դիմակաւորութեամբ գործիչ յեղափոխականները :

Այդ ցածահոգի մարդիկն են, այդ բարոյապէս մեռած արտաբաններն են, որոնք յանդգնում են մեր դժբախտ ժողովրդի ազատագրական, վերածնման գործի մէջ զեր խաղալ :

Սրիկաների մի ահագին խումբ է որ փառափառում է այդ զլեւիլի արարածներին և քաջալերում դրանց կործանարար ընթացքը : միամիտներէ մի թանձր զանգւած է որ ոչխարի պէս հետեւում է այդ ազգադաւ և զնգալի արժանի վատերին :

Արտասահմանեան հայութեան խաբվածներէ, թափառաշրջիկներէ, փողոցային տարրի, անտարբերներէ և թրքամուկներէ մի երամ է որ Գաղափարութեան առաջարկում է ձեռք տալ այդ, մեր ստրկական կեանքի հրէշ վիժմունքներին՝ մեր յեղափոխութիւնը, ազատագրութեան վեհ և մաքուր գործը առաջ տանելու : ալիքնքն քանդելու և Սոցիալիստ ստրուկի «Երախտագէտ ծառայի» ծրագիրները իրագործելու համար :

Այդ բոլորը միասին զարմանում, կատաղում, բարկանում և վշտանում են թէ՛ ինչո՞ւ Գաղափարութիւնը չէ՛ միանում իր «քոյր» կուսակցութեան հետ : Ի՞նչ քոյր, այդ մարդկանցից

զեկուարված մի մարմին մի թէ կարող է քոյր լինել այդպիսի ազատաւ արիւնտ ձեռքերին մի թէ կարելի է ձեռք մեկնել : Ա՛յ, հազար անգամ ո՛չ :

Շատ միտիւարակուն և քաջալերիչ է Հայ. Յեղ. Գաղափարութեան բռնած ընթացքը դէպի այդ հրէշները : Այն մեք կուզենք հաւատալ թէ Գաղափարութիւնը իր գործունէութիւնը կը շարունակէ, առանց շփոթելու այդ զլեւիլի արարածներէ հետ, միշտ իր ուժը որոնելով բուն հայ ժողովրդի մէջ, որը թէեւ պակասութիւններով, բայց միշտ անդիմակ ու շակվելու և բարոյապէս բարձրանալու տրամագիր և բնութենակ է :

ԱՐՄՈ

### ԵՐԲ ՊԻՏԻ ՕԳՆԵՆԲ

Ամէն բարեկամատակ ձեռնարկներու համար «Մարտի» արձագանգ եղած է : Վերջերս Պուրկալի հայաստանցի բռնակիրներուն օգնելու խնդիրն ալ անյուզեց : Բայց դժբախտաբար մինչև հիմա և ոչ մէկ տեղ գործնական կերպով խորհող մը չեղաւ : Ֆիլիպէ ալ նոյն անտարբերութիւնն է որ կը տիրապետէ : Անդին պուրկար տարրը ամէն ճիգ չի խնայել Խաղաղի (Պուրկարի) շրջակայ զիջելու սովորեց համար օգնելու : Նոյնիսկ քաղաքի մէջ սկանաւոր անձնաւորութիւններէ կազմուած մէկէ աւելի յանձնաժողովներ կան : Այս բանը բարի նախանձ մը շարժեց իմ մէջս ու ալ չի կրնալով յուսով ապրիլ «Մարտի» միջոցաւ կը զլմամ ամէն մէկ քաղաք և կամ գէթ միայն մէկ տեղ մը յանձնաժողով մը կազմել ու աշխատիլ ձեռք կարկառել հայրենիքի զաւակներուն որոնք թուրքին վայրագ բռնութենէն մազապուր ազատել վերջ, այսօր ալ թշուառութեան ճիրաններուն զոհ երթալու վրայ են : Յետով եմ թէ իմ այս առաջարկս անտարձագանք չի մնար : Ես համեատ

զուժար մը արձանագրելու պատրաստ եմ հոգատար մարմնի մը գոյութիւնը իմանալուս պէս :

Ֆիլիպէ, 11 Փետրուար  
Յ. Մ. Գրութիւնս աւարտած էր երբ «Մարտի» 203 թիւը ձեռքս անցաւ ուր տեսայ թէ նպատակ խնդիրը սուր կերպարանք առած է, հետեւապէս ալ աւելի փութալու հարկին մէջ ենք :

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

1899 Գեղարքունիքի 31-ին թաւրիզի Լիւրաւայ թաղի զբոսայի թատերասրահում կազմուած էր Մանկական Երեկոյը :

Սրանք երկսեռ հանդիսականներով լիքն էր, որոնք 1-2 բուլլի վճարելով եկել էին ուրախ և հաճոյալից ժամեր անցկացնել :

Այդ գիշեր՝ ապրիլայ խառնարկեր եղանակը իրար ընդդէմ սաստկութիւնը հանդէս էր բերում. բոլոր սաստիկ փոթորկում էր և ամէն ինչ թաղվում ձիւնի և սառցի տակ :

Տաք զգեստի և վերարկուներէ մէջ փաթկալով հանդիսականներէ և ոչ մէկի մտքից չէր անցկանում թէ ձմեռվայ այդ զմեպակ եղանակում, մանաւանդ այդ տեսական հոգեյոյց օրերում, որ կարծես վիճակներէ անհաւասարութիւնը էլ աւելի սուր կերպարանք է ստանում, կան չքաւորներ, որոնց մշտական բռնութիւնը և մեղկութիւնը... : Այս թշուառները, մանաւանդ երախաները, գեանափոր խցիկներում ցրտից զոզոզում էին և անդամներին իրար զարկում. մի բռն վարելիքի, մի պատառ ցամաք հացի և ցնցոտիների կարօտն էին քաշում... :

Մինչդեռ ունեւորներ, իրանց երախաներին նոր զգեստ հագցրած երեկոյթին բերել էին ևս սուր վերադառնալիս էլ մրքայից սեղանը պատրաստի էր, կուշա կուշա վայելելու համար հարստութեան բարիքները... :

Ի՞նչ սոսկալի հակապատկեր... : Մայրաքիչ թշուառութեան հանդէպ գուր էր հարկաւոր : Եւ ո՞վ պիտի զթաւր այդ թշուառ արարածներին ո՞վ պիտի միտիւարէր նրանց, ողբացող այրի կնոջ և անալր անտիրս կանին : Երեւի թաւրիզի հայ հասարակու-

թիւնը վիկտոր Հիւկոյի բշտաւնէրի և Բիւկուրնի Միլիտանի գոյութեան վրայ բնաւ գաղափար չունի : Երեւի Անեսարան իսկ չէ կարգում և կամ չի հասկնում. այս, մեզ պակասուած են բարեգործութեան, առաքելութեան և գութի տրպարներ, և սրա փոխարէն մենք ունինք մեծ թուղ եսամոլներ, անձնասէրներ և փողապաշտներ... : Եթէ այսպէս չը լինէր այժմ թաւրիզը ունեցած կը լինէր իրա Աղխատախանութիւնը և կամ թէ արդէն հաստատուած «Թաւրիզի Հայ. Բար. Ընկերութիւնը» իրատառ զբոսայի պարտականութիւնը լիովին կը կատարէր : Բայց զժողովրդաբար այժմ թաւրիզ ոչ առաջինը ունի և ոչ էլ վերջինից օգտվում է. որչափ օգտակար պիտի լինէր այդ ընկերութիւնը եթէ գործի զեկաւարութիւնը յանձնուած լինէր ձեռնահաս, կերթված և հետապետ անձերի :

Փակելով այս տխրագոյնիկ էջերը և սեւ վարագոյր ձգելով հանգուցեալ Աղխատախանի և թաւրիզի Հայ. Բար. Ընկերութեան վրայ միւս անգամ կանցնելու մեր բուն պատմելիքին :

ՄԻՐՁԱ  
ՊՐԱՅԻՒԱ, 5 ՓԵՏՐ.

Թուրք կառավարութիւնը իմանալով Պուրէշի մէջ Պուրկարական զազանի յեղափոխական ընկերութեան մը գոյութիւնը, անոնց շարժումներուն և գործոց վրայ ստոյգ տեղեկութիւններ առնելու նպատակաւ երեք հոգի կը զրկէ Պուրէշ, որոնց մէկը Ֆիլիպէի անուն պուրկար մը, երկրորդը ձեմիլ անուն թուրք մը և երրորդը դարձեալ թուրք մը որուն անունը տակաւին յայտնի չէ :

Սակայն Պուրէշի Պուրկ. յեղ. ընկերութիւնը իմանալով զայս, անմիջապէս կը տեղակազդէ իրողութիւնը Սօֆիայի Մակեթոնական կեդրոնական զօմիթէին և կը խնդրէ որ զիջենք ազատէ այդ մասնիչներէն՝ եթէ կուզէ որ անարգել իրենց գործը կարենան շարունակել :

Սօֆիայի կեդրոնական զօմիթէին ինկատի առնելով և արդարացի գոնեւ լով Պուրէշի զօմիթէին խնդիրքը, իսկոյն իր գահիճներէն երեք հոգի՝ Պօլչէ Իլիւկ, Միթօ Սթօյչէկ և Նիքօ-

ըստ Միթով Պուրէշ կը զրկէ մասնաւորապէս այն հրահանգով որ հրապարակը այդ երեք մասնաւորներէն ազատեն :

Արդարեւ այդ երեք դահիճները ամսոյս 11ին կիրաւի գիշեր Պուրէշ կը հասնին և սեպտեմբերի 12ին հետ տեսակցութենէ մը վերջ կը որոշեն որ Պուրէշ Իլիէֆ Պիթովսքին հալածէ և Միթով Սթոյչիֆ ձէմալը և Նիքօլա Միթովսքի անձանթ թուրքը, իսկ երեքն ի միասին ի հարկին էրարու օգնեն :

Ամսոյս 13ին, երեքշաբթիէն շորերշաբթի լուսանալու գիշեր վերջապէս Պուրէշ Իլիէֆ առիթը գտնալով Պուրիսիայէն բերուած կացինի մը հարուածով մասնաւոր Պիթովսքիի գլուխը գրեթէ ամբողջովին իրանէն կը զատէ Չափուշ Ռատու փողոցին անկիւնը, և զայն կատարելապէս մեծած լիճակի մը մէջ ձգելով առանց յայտնուելու կառնէ կը քայլէ :

Առաջին բրքորոյրին հարցաքննիչ գատաւորին և ոստիկանութեան պետին խուզարկութիւններն հետեւեալ մանրամասնութիւններն երևան կը հանեն :

Պիթովսքի՝ Կրիկօրիօ անուն պուլկար ուսանողի մը հետ իւրիկուսան ժամը Տին Ժօղէֆ Մարքովիչ անուն մէկու մը սրճարանէն դուրս կելլեն որ կը գտնուի Գանձըմիւր փողոց թիւ 70 . ճամբան Թրիֆանովին հանդիպելով՝ երեքը միասին վաքարէշտի փողոց թիւ 38 գլինետուն մը կը մտնեն . հոն մէկ մէկ պըակա խմելէ վերջ Կրիկօրիօ իր տունը կը վերադառնայ և Թրիֆանով Պիթովսքիի Օլիէնի՝ Լապիլիին թիւ 73 տան գլուխը, ուր Թրիֆանովի գը բաժնուի Կրիթովսքիէն և այս վերջինը կուզուի ղէպի Չափուշ Ռատու փողոցը : Հազիւ այս փողոցին անկիւնը

նը հասած, Պուրէշ Իլիէֆ՝ որ ժամանակէ մը ի վեր Պիթովսքիին կը հետեւէր՝ առանց ուրիշ ձայնը հանելու շուտափութ կը յառաջանայ և ձեռքի կացինովը զօրաւոր հարուած մը կուտայ Պիթովսքիի սրտաշարին . մասնաւոր առանց ձայն մը կարեւնալ հանելու զանգուածի մը պէս կիյնայ և Իլիէֆ կացինի երկրորդ հարուածով մը անոր գլուխը գրեթէ բոլորովին կը զատէ ոչնչալարէն :

Պուրէշ Իլիէֆ երկար հասակով և շատ զօրաւոր կազմով մէկն է : Ծայրայեղ հայրենասէր, կոչմանն ու պաշտօնին խիստ յարմար և իր զլխատուններու հրամանին կուրօրէն հնազանդ մէկն է : Սա Գանձըմիւր փողոցը պրակածախի մը տունը պսակած ժամանակ ձերբակալուած է : Հարցաքննութեան ատեն թէպէտ նախ և առաջ ուրացած է ամեն բան, բայց տեղական թերթեր կիմայնեն թէ ի վերջոյ խոստովանած է ամեն բան և մանաւանդ պանձալով պատմած է թէ Պուրիսի Մակեդոնական Յեղ. կեդրոն կան ղօմիթէի հրամանին համաձայն՝ Սեյանիկի բոլորաբար ղրկուի մը մէջ :

Պուրիսի հայկական թաղի մը մէջ, Չուլցերիոյ և Պէլճիգայի մէջ բազմաթիւ դատաճաններու դահիճը եղած է : Բայց ինչ որ ամենէն աւելի ուշագրաւ է, այն է թէ՛ բոս սեղանական թերթերու տուած սեղեկութեանց Ստամբուլի քաղաքի ալ սպաննիչը եղած է : Եթէ այս յայտարարութիւնը ճշմարիտ է, զատական մեծ և նոր սխալութիւն մը վարդապետին մէջ կը գտնուի Պուրիսիա . քանի որ այս միեւնոյն ոճրագործութեամբ ուրիշ մը արդէն մահուամբ պատժուած է կարծեմ երեք ուսրի առաջ :

Միթով Սթոյչիֆ և Նիքօլա Միթովսքի ալ ձերբակալուած են : Միթովսքի հարցաքննութիւնով նախ ուրացած է ոճրագործութեան մասնակցութիւնը բայց վերջը կատարելապէս խոստովանած է

ամեն բան և յայտնու թիւնները պուլկարերէն լեզուով ինք իր ձեռքով գրած ու ստորագրած է : Ըսած է որ Սօֆիաի Յեղ. զապանի ղօմիթէին կողմանէ պաշտօն առած է Պիթովսքիին և անոր համախոհները սպաննելու համար, ինչու որ անոնց արարքը պուլկար ազգային շահերուն հակառակ նկատուած են : Աւելցուցած է նաեւ որ Սօֆիաի ղօմիթէէն զբամակուն նպատակով ընդունած է : Միթովսքի շարժական հաստատակամ մէկն է և բոսած է որ իր պաշտօնը ի գլուխ հանելու համար և ոչ մէկ բան արգելք պիտի կարենայ ըլլալ իրեն :

Պուրէշի Պուլկար ուսանողներէն շատերը այս պատճառու ձերբակալուած են և հարցաքննութեան կենթարկուին :

Բարագոյլու անուն պուլկար մը որ 20 օրի չափ ստալ Պուրէշ եկած է Եղեր, ձերբակալուած է նմանապէս Գրիթիէա Պիթիա առուն որուն տունէն կարեւոր թղթակցութիւն մը գտնուած է գաղտնի յեղափոխութեան անդամներէն գրուած :

հերու, անչահ հակառակութիւններու համար, հանդիսաւայրէն փողոց մը հետո իբր լրակներ կայնած կարգիւն հոն պարզները մէկին լինեցած է . մի սին դեռնոր պիտի սկսին . բնութիւնը կը համոզին նորահնար ստանբուլ ու ետ կը վերադարձընէին . (Թիւ գանոնք մօտէն ճանչցողները չի խորոհեցան) : Այ բաւական է սեւ ուրուրներ, հանգիստ թողէ՛ք ժողովուրդը, մտնուանդ զարգացման և լուսաւորութեան սպառէ՛ք իստող վաճառողները . ալ բաւ է խոշորոտներ հանդիսանալ : Դուք ձեզ լուսամիտներ կը կարծէք ու այնպէս կը հաստատենք ժողովուրդի պարզամիտ ստակարգը հը, վա՛յ ձեզ կեղծաւորներ . . .

Մտնե՛ք հանդիսաւայրը, Տ. Մ. Չարչաֆճեանի աստիճանաթիւնով հանդէսը բացուեցաւ . նախ բացատրեց հանդիսի նպատակը և նոր տարւոյ մասին այ քիչ մը խօսեցաւ պարզ և զիւրահասկնալի ոճով մը : Երգեցիկ խումբը «Թէ Հայրենեաց» երգը երգեց . դաշնակահար Պ. Թաշճեան ազգային երգերէն բնաիր կտորներ երգեց ու նուագեց և բուն ծափահարուեցաւ :

Պ. Մ. Բուրակեան նոր տարւոյ ասիւլ գեղեցիկ ճառ մը կարդաց ու ժողովուրդէն ծափահարութիւններ խնայ : Օր. Աղաւնի Աշճեան «Թէ իմ հայրենեաց» արտասանութիւնն որբաւ և Տիկին Մ. Տէրիֆլեան «Իմ սիրելի գաւազնուքս» երգեց և ծափահարութեան արժանացաւ :

Տիկին Սարկաւազեան յատուկ հրաւիրուած էր (ձերբակալ) խօսելու, որն իստ գեղեցիկ և լիմաստայից ճառ մը կարդաց . նիւթն էր «Լուրի ուսուցիչներ» : Տիկինը քաղցր ընդհատեց ընթացքով և նոյն լիմաստով յորդուեց իրական սեօր թիւթափի անտարբերութեան կողմը, միանալ յառաջողով ընթացակարգը զարգացնելու դասակարգի հետ . զարգանալ ու զարգացնել պղտիկները, ապագային հայութեան արի զինուորներն ըլլալու համար . չիտեց իտքը ըսելով . . . . մենք կրնենք ալ . . . :

Տիկին Սարկաւազեանի ճառը մեծ սպաւորութիւն գործեց ունկնդիրներուն վրայ . ուժեղակի ծափահարեցին զինքը . ներկաներուն մրցեղէններ ալ բաժնուեցան :

«Երանոս Աղար» ծիծաղալով կատակերգութիւնը ամենէն հաջողութեամբ այն քանի «չնորհալիներուն», որոնք իրենց անձնական գնով չա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Կ Ա Ր Մ Ի Ր Դ Ր Օ Ճ Ա Կ Ը

(Շար. 101րդ թիւն և վերջ)

Երեք չորս ամիս էր անցել այն օրէնց, երբ Հրանդը Սրբազան աւանդը ընդունեց սիկին վարդուհուց և ազատ Բուլղարիայից հեռացաւ : Բացի սիկին վարդուհուց և նրա ամուսնուց ոչ ոք գիտեր երիտասարդի տեղը, Մանթինը մի երկու անգամ Հրանդին հարցնելուց յետոյ շուտով բոլորովին մոռցան նրան Միայն մի քանի մօտիկ բարեկամներ համոզված էին որ նա Տաճկաստան է գնացել . բայց ո՞ր գաւառը, ո՞ր քաղաքը, չը գիտէին : Մէկը Պօլիս, միւսը վան, երրորդը Մուշ էր կարծում :

Նոյն թվականի աշնան վերջերին գտնվում էի թրքաց սահմանազրկի մօտիկ Կովկասեան հայաբնակ քաղաքներից մէկում, Մի երեկոյ, տանից դուրս եկայ . գնալու բարեկամներիցս մէկի մօտ : Մայր եկեղեցու դանգակը ճնշող ու վշտազին ձայնով զողանջեց տասը ժամը . քաղաքը ընկղմված էր մի տեսակ գաւառական խուլ լուսթեան և թանձր խաւարի մէջ : Միմեանցից շատ հեռու փողոցային լապտերները ոչ միայն լուս էին լուսաւորում, այլ իրանց ազոտ պլպլոցով աւելի ծանր կերպով զգացնել էին տալիս տիրող խաւարի թանձրութիւնը : Ծանապարհ շարունակում էի, երբ յանկարծ գիմացաւ ելաւ բարեկամս . և իմ հարցին թէ ո՞ւր է գնում, պատասխանեց . — Դ. իջևանը . գնանք միասին, այնտեղ շատեր կան . նոր մարդիկ էլ կը տեսնես . — Ո՞վ էր են այդ մարդիկը, հարցրի :

— Տաճկահայ երիտասարդներ, զինակիրներ, այս գիշեր պէտք է ճամբայ ընկնեն . զէնք են տանելու : — Ո՞վ է դրանց ղեկավարները, աստիճանը ունե՞ն : — Այո՛, Եւրոպայից եկած մի Մշեցի երիտասարդ, պատասխանեց բարեկամս : Այդ հետաքրքրութիւնս աւելի շարժեց, բայց ընկերս չը կարողացաւ բաւականութիւն տալ . որովհետեւ ինքն էլ շատ բան չը գիտէր : Մենք լուռ ու մունջ, երկար ու բարակ շարունակեցինք մեր ճանապարհը . վերջապէս մի կէս ժամից յետոյ հասանք իջևան, որը բարձր, սրբատաշ քարից շինված շինութիւն էր . կատարեալ փաստաւոր անցեալով մի միջնադարեան ամրոցի էր նմանում և մի մասը, հսկայական ժայռի նման ցցվել էր մութ ու ամայի հրապարակի վրէժում :

Փողոցի անկիւնում կանգ առանք . բարեկամս մի քանի վայրկեան բոլոր անկիւնները գիտեց և ապա սկսեցինք շինութեան պատի տակով խաւարի միջով կամաց կամաց առաջ գնալ ղէպի դուռը : Վերջապէս հասանք . բարեկամս մի քանի խորհրդաւոր հարած տեղ գրանդ, դուռը բացվեց, մենք ներս մտանք ու քայլերու ուղեղցինք ղէպի անկիւնի տանիւղի վրէժները, որի վերեւում պատուհանի միջից ճրագ էր երեւում : Կրկնապէս կրկին սենեակի դուռը բացվեցինք և մեզ ներս ընդունեցին : Իմ աչքի առջև պատկերացաւ մի ողևորիչ տեսարան, 7-8 շայտասանցի երիտասարդներ, Մօսինի հրացանի զանազան մասերը ձեռքերում բռնած, այնքան ոգևորված էին որ հազիւ մեզ բարեկցին . մէկը հրացանի փողն էր փայփայում, միւսը փամփռչալիքի սուր ծայրերն էր շոյում, երրորդը ըլթակի հետ էր խաղում, չորրորդը

լոյս էր ցլուկահան իր ճիւղի մը ա- կանատան եղան հանդիսակարները...

Ընթերցող, նպատակս չէ քննա- գատել զիրատանները, թէ և քննա- գատութեան կողմեր ունենին...

Մեր շնորհակալութիւնները Պատ. վարչութեան:

ԻՆՒ ԱՇՏՈՒՆԻ

ՏԱՐՏԱՆԷԼ, 26 Փետր.

Փետր. 1ին այցելեց քաղաքիս Գերման փաշա մը իր ճամբիկ եւ- վերով...

Հոս գտնուած զօրքերը գրէթէ «1» տարիէ ամսամտոյակ առած չեն բնաւ...

Քաղաքնու մէջ 1ը գտնուին պանդուխտ վանայ շրջակայ գիւ- ղերէն...

կէտմարիւղը կաշխատի, երկ- րորդն ամուսնի կաշխատի, եր- րորդը փախուտի կաշխատի...

Այսպիսի նեղ վիճակնուն մէջ մօտ օրերս այցելեց զանոնք «Թագախոսի» մը...

Տամար քանի մը տղաքներէն նեղացեր է...

Աս մարդուն ըրած պատմու- թիւնները լսելիք նէ շատ արա- մելով պիտի լայլք...

ՔԷՄԱՆ, 20 Յունի.

Իէմախի գատարունէն դուրս ելլալով քաջուցայ տեղ մը և...

Նստած էինք, յանկարծակի լուր հասա թէ գեղը զախթիէներով լցուցան...

Չանազան գիւղերէ 4—5 հայեր ժողուեցանք և շատ աղաչեցինք...

Հիմա ձեռքերնիս ինչ որ ու- նինք պիտի ծախեն, մեր լծկանը պիտի խլեն...

ՎԱՐՊԱՆԱՆԾ ՀԱՆՂԵՐ

Անցեալ հինգշաբթի օրը տեղ- ւոյս Աղզ. վարժարանի բակին մէջ...

կոթն էր սեղմում ուսին, և ամէն մէկ շարժումներէ հետ լսվում էին ախ...

Վերջապէս զէնքերը տեղաւորեցին կապոցներէ մէջ...

առն երեւում էր մի արախիչնով Մշեցի հասուն երիտասարդ...

Բարեկամիս հարցրի երիտասարդի մասին...

Ակտեցի մի լաւ գիտել և ճանաչեցի լսածս...

— Կարծեմ գուք Հրանդն էք և Բուլղարիայից էք եկել այստեղ:

— Այո, Պուլղարիայէն, դուք ալ այնտեղէն կուգաք...

— Սյո, պէտք է վերադառնամ, պատասխանեցի:

նեց կարմիր դրօշակը իր կրծկալի տակից...

Բոլորս էլ սկսեցինք ողբերոված նայել այդ դրօշակին...

— Չէնք և գրօշակ, այլ ևս ինչ է՞ք ուղում...

— Այո, զէնք, զէնք և մարդ, մարդ, հային ազատութիւնը...

— Սյո, պէտք է վերադառնամ, պատասխանեցի:

— Եթէ այդպէս է, երբ երթաք Ն. քաղաքը...

— Մի քանի շաբաթից յետոյ իմա-

ջը կարգաւ դպրոցականները եր- գեցին, և ի վերջոյ Տ. Յ. Պոն- ճուպեան, Աղզ. վարժարանաց տնօրէնը...

Տեար Պոնճուպեան յետագայ իմաստով վերջացուց իր առե- նախօրութիւնը...

ՆԱՄԱԿԱՆՏՈՒՓ

Պուրէշ, Պ. Ա. Պարագեան. — Կը սպասենք զրամները և չի վճարող բաժանորդներու ցանկը...

Պուրէշ գրուած բաժանորդագրու- թեան նամակ մը ընդունած ենք...

Պուրէշ, Տ. Պալեոնեան. — Ձեր հաշիւն Տ. Արշակ Սվաճեանէ պա- ցանք 4.25 ֆրանք:

— Պ. Ճիվէլէկան. — Կը խնդրենք առանց ուշացնելու զրկէք Բնօտէն- ճէկն զանձած բաժնեկիները:

— (—)

ցայ որ խուճըր յաջողութեամբ տեղ էր հասցրել զէնքը...

Կարմիր դրօշակը արդէն մի քանի ընդհարումներէ ժամանակ փողփողա- ցել է հայկական ազատ խմբերի առ- ջեւում...

Ու ինչո՞ւ չպատել որ հետու չէ այն ժամանակը երբ այդ նոյն կառ- միր դրօշակը, փոխանակ փողփողի խմբի, ապստամբական գնդի առջեւ կը փողփողայ...

ՎԱՐՊ

— (—)

